



ԵԱՀԿ Երևանի գրասենյակ



ՀՀ քաղաքացիական
ծառայության խորհուրդ



ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՐԱՏՈՒՄ

Մամուլի և հասարակայնության հետ կապերի պատասխանատու քաղաքացիական
ծառայողների և ոստիկանության, պաշտպանության և ազգային անվտանգության
մարմինների մամուլի ծառայությունների համար

Վերապատրաստման կարիքների գնահատումն իրականացվել է «Ինֆորմացիայի
ազատության» կենտրոն շ.հ. և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից,
ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ:

ԵՐԵՎԱՆ 2008

Մույն փաստաթղթում արտահայտված կարծիքները, ներկայացված տվյալները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի կարծիքների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	6
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	14
ՏԱ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ.....	19
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՓՈՐՁԸ	20
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ	25
ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	27
ՏԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ	28
ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ.....	Error! Bookmark not defined.
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	32
ՀԱՎԵԼՎԱԾ 1	
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ.....	36

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը «Տեղեկատվության ազատության մասին» (այսուհետև՝ SU) համապարփակ օրենք է ընդունել 2003 թ.-ի սեպտեմբերի 23-ին: Սակայն մինչ օրս SU օրենքի կիրառումը շարունակում է լուրջ խնդիր մնալ պետական և տեղական մարմինների, ինչպես նաև ողջ հասարակության համար:

Ստեղծված իրավիճակի պատճառներից մեկն այն է, որ կառավարման մարմիններում տեղեկատվություն տնօրինողները տեղեկատվություն չեն տրամադրում օրենքով իրենց վրա դրված պարտականությունների մասին բավարար չափով տեղեկացված չլինելու և օրենքը կիրառելու համար անհրաժեշտ գիտելիք և հմտություններ չունենալու պատճառով: Այդ բացը լրացնելու համար անհրաժեշտ է վերապատրաստման դասընթացներ կազմակերպել պետական մարմինների մամուլի և հասարակայնության հետ կապերի պատասխանատուների համար: Կառավարման բոլոր ոլորտներն ունեն տեղեկատվության բանիմաց պատասխանատուների կարիք, ուստի ուսուցման այդ դասընթացներին կարող են մասնակցել տարբեր ոլորտներում աշխատող պաշտոնյաներ: Սակայն, կարծիք կա, որ թափանցիկությունն առավել դժվար հասանելի է ուժային կառույցներում, ոստիկանության և ազգային անվտանգության մարմիններում, մինչդեռ այդ մարմինները պետք է առաջնորդվեն թափանցիկության, պատասխանատվության և օրենքի գերակայության համընդհանուր ժողովրդավարական սկզբունքներով:

Միևնույն ժամանակ, պետական պաշտոնյաների համար SU խնդիրների մասին կանոնավոր դասընթացներ կազմակերպելուց առաջ անհրաժեշտ է գնահատել այդ պաշտոնյաների կարիքները և նրանց ակնկալիքներն այդ դասընթացներից: Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի գնահատելու SU օրենքի մասին կենտրոնական և մարզային պաշտոնյաների գիտելիքների մակարդակը և օրենքի կիրառման հետ կապված առկա իրավիճակը, ինչը հնարավորություն կտա մշակել SU խնդիրներին նվիրված ընդհանուր վերապատրաստման ծրագիր մամուլի և հասարակայնության հետ կապերի պատասխանատու քաղաքացիական ծառայողների և ոստիկանության, պաշտպանության և ազգային անվտանգության մարմինների տեղեկատվության համար պատասխանատու անձանց համար:

Ուսումնասիրության նպատակն ու մեթոդաբանությունը

Կարիքների գնահատման սույն ուսումնասիրության առաջնային նպատակը պետական պաշտոնյաների շրջանում SU օրենքի դրույթների իմացության մակարդակի, SU հարցերի շուրջ կազմակերպվելիք վերապատրաստման դասընթացներից նրանց ակնկալիքների, SU օրենքի ու վերջինիս կիրարկման մեխանիզմների վերաբերյալ նրանց գիտելիքների խորացման անհրաժեշտության բացահայտումն է:

Այս նպատակով հարցազրույցներ են անցկացվել ինչպես կենտրոնական, այնպես էլ բոլոր 10 մարզերը ներկայացնող 45 պետական և տարածքային կառավարման մարմինների 104 պաշտոնատար անձանց, այդ թվում՝ ոստիկանության, պաշտպանության և ազգային անվտանգության մարմինների մամուլի պատասխանատուների հետ: Մանրամասն անհատական հարցազրույցների հիման վրա մշակվել է սույն Գնահատման հաշվետվությունը, որն առաջարկություններ է պարունակում առ այն, թե ինչպես լրացնել տեղեկատվության տրամադրման համար

պատասխանատուների SU մասին գիտելիքների բացերը և կատարելագործել SU օրենքի կիրառման մեխանիզմները: Դա հիմք պետք է հանդիսանա քաղաքացիական ծառայողների և ոստիկանության, պաշտպանության և ազգային անվտանգության մարմինների տեղեկատվության պատասխանատուների համար միասնական ուսումնական ծրագիր մշակելու համար:

Մինչ հարցազրույցներին անցնելը ուսումնասիրվել են կառավարման մարմինների կառուցվածքը, նրանց գործառույթները և ղեկավարման համակարգերը՝ թիրախ լսարանը հստակեցնելու նպատակով:

Ուսումնասիրությունը և հարցազրույցներն իրականացրել և Կարիքների գնահատման զեկույցը պատրաստել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը:

Համառոտ տվյալներ հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաների մասին

Հարցազրույցներին մասնակցել է 104 պաշտոնյա: Հարցվածների ընդհանուր պատկերը հետևյալն է՝ .

- 66 տոկոսը եղել են պետական մարմինների հանրության հետ կապերի վարչությունների պետեր,
- 21 տոկոսը՝ մամլո քարտուղարներ,
- 10 տոկոսը՝ աշխատակազմի ղեկավարներ,
- 3 տոկոսը՝ խորհրդականներ և օգնականներ:

Հարցվածները ներկայացնում էին 45 պետական մարմիններ, որոնցից 41-ում գործում է քաղաքացիական ծառայության ինստիտուտը, իսկ մյուս 4-ը՝ ՀՀ գլխավոր դատախազությունը, ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը և պաշտպանության նախարարությունը: *(Ուսումնասիրության մեջ ընդգրկված մարմինների ամբողջական ցանկը ներկայացված է սույն զեկույցի Հավելված I-ում):*

Հարցազրույցներին մասնակցած պաշտոնատար անձանց 62 տոկոսը (կամ 64 հոգի) կանայք են եղել, իսկ 38 տոկոսը (կամ 40 հոգի)՝ տղամարդիկ: Վարչություններում հանրության հետ կապերով և տեղեկատվության խնդիրներով զբաղվողները հիմնականում կանայք են, սակայն գերատեսչությունների ղեկավարները, որոնք հիմնական որոշումներ կայացնողներն են, մեծ մասամբ տղամարդիկ են:

Ուշագրավ է, որ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում, հարցազրույցներին մասնակցած մարմինների պաշտոնատար անձանց մեծամասնությունը (53 տոկոսը, կամ 55 հոգի) 40 տարեկանից բարձր է եղել, 44 տոկոսը (կամ 46 հոգի) պատկանել են 25-ից մինչև 40 տարեկան տարիքային խմբին, և ընդամենը 3 տոկոսը (կամ 3 հոգի)՝ 18-ից մինչև 24 տարեկան տարիքային խմբին:

70 հոգի եղել են պետական կառավարման մարմիններից, 22-ը՝ տարածքային կառավարման մարմիններից և 12-ը՝ տարբեր կարգավորիչ մարմիններից և Երևանի քաղաքապետարանից:

Հարցազրույցներին մասնակցած 71 պաշտոնյաներ (կամ 68 տոկոսը) նշել են, որ տեղեկություններ տրամադրելը մտնում է իրենց պարտականությունների մեջ, 17 տոկոսը (կամ 18 հոգի) ասել են, որ դա իրենց պարտականությունների մեջ չի մտնում, և 15 հոգի (կամ 15 տոկոսը) վստահ չէին կամ չգիտեին՝ տեղեկություններ տրամադրելը մտնո՞ւմ է իրենց պարտականությունների մեջ, թե՞ ոչ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Միջազգային պարտավորություններ

Հայաստանը՝ որպես մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ, ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթերը: Դրանով իսկ Հայաստանը պարտավորվել է հարգել մարդու իրավունքները, այդ թվում՝ արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքը հարգելու պարտավորությունը:

2002 թ.-ին Հայաստանը՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ, վավերացրել է «Մարդու իրավունքների մասին» եվրոպական կոնվենցիան, որի 10-րդ Հոդվածը պաշտպանում է արտահայտվելու և տեղեկատվության ազատությունը: Որպես ՄԱԿ-ի անդամ (1992 թ.-ից)՝ Հայաստանը նաև միացել է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին», որի Հոդված 19-ում հռչակվում է հետևյալը. «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքներ ունենալու և արտահայտվելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու և տեղեկություններ ու գաղափարներ որոնելու, ստանալու ու տարածելու ազատություն, լրատվության ցանկացած միջոցներով, անկախ պետական սահմաններից»: Հայաստանը վավերացրել է նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (ուժի մեջ է մտել 1993 թ.-ից), որի Հոդված 19-ում խոսվում է «սեփական կարծիք ունենալու» իրավունքի և «անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու» ազատության մասին: Հայաստանը նաև ստորագրել և վավերացրել է Օրհուսի կոնվենցիան (1998 թ.-ին և 2001 թ.-ին, համապատասխանաբար):

Հայաստանը՝ որպես 1992 թ.-ից Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) մասնակից պետություն, պարտավորվել է հարգել «Հելսինկյան եզրափակիչ ակտում» և ԵԱՀԿ-ի հետագա հռչակագրերում արտացոլված չափանիշները:

Տեղեկություններ ստանալու իրավունք

Սահմանադրական իրավունք

2005 թ.-ի նոյեմբերին ընդունված սահմանադրական փոփոխություններով տեղեկություններ ստանալու իրավունքը հռչակվել է որպես սահմանադրական իրավունք: Տեղեկություններ ստանալու իրավունքը ճանաչվել է որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկը:

ՀՀ Սահմանադրության Հոդվածներ 27-ում և 27.1-ում ամրագրված են արտահայտվելու ազատությունը և տեղեկություններ ստանալու իրավունքը: Հոդվածներ 23-ը և 33.2-ը լրացուցիչ երաշխիքներ են նախատեսում պաշտոնական տեղեկություններին ծանոթանալու իրավունքի համար:

Հոդված 27

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխել այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»:

Հոդված 27.1

«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետներում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:

Սահմանադրության **Հոդված 23-ը** նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Սահմանադրության **Հոդված 33.2-ը** հռչակում է բնապահպանական տեղեկությունների մատչելիությունը.

«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումը մերժելու համար»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք (2003թ.)

ՀՀ Ազգային ժողովը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ընդունել է 2003 թ.-ի սեպտեմբերի 23-ին: Այն ուժի մեջ է մտել 2003 թ.-ի նոյեմբերի 15-ին: Օրենքի գործողությունը տարածվում է ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ նաև հանրությանը որոշ ոլորտներում ծառայություններ մատուցող կամ ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող մասնավոր կազմակերպությունների վրա:

Չնայած օրենքն արդեն գործում է, կառավարությունը դեռևս չի ընդունել օրենքով նախատեսված ենթաօրենսդրական ակտերը, որոնք պետք է հեշտացնեն օրենքի կիրառումը:

SU օրենքը հստակ հնգօրյա ժամկետ է սահմանում տեղեկություններ պահանջող հարցումներին պատասխանելու համար: Եթե հարցման մեջ նշված տեղեկությունները տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ

աշխատանք, ապա այդ տեղեկությունները դիմողին են տրվում հարցումը ստանալուց հետո 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունները տրամադրելու վերջնական ժամկետը:

SU օրենքը նաև պահանջում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարբերաբար, տարին առնվազն մեկ անգամ, հրապարակեն իրենց գործունեությանն առնչվող տեղեկություններ, օրինակ՝ հանրության համար իրականացվող աշխատանքները և ծառայությունները, բյուջեն, հաստիքացուցակները, պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատավարձը, աշխատանքի վայրի հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները, տնօրինվող տեղեկությունների ցանկը և այդ տեղեկությունների տրամադրման կարգը, շրջակա միջավայրի վրա ներգործությունը և այլն:

SU օրենքում նաև հստակ նշված են տեղեկատվության մերժման հիմքերը և կարգը, որը պահանջում է, որ բոլոր մերժումները հիմնավորվեն՝ ըստ օրենքով սահմանված հիմքերի: Այդ դրույթները նպատակ ունեն կանխելու պաշտոնյաների կամայականությունները:

Հայաստանի SU օրենքի առավելություններից մեկը նաև այն է, որ օրենքը իրավական պաշտպանություն է նախատեսում տարատեսակ խախտումների կամ ապօրինությունների մասին ահազանգողների համար: Հոդված 8-ում սահմանված են տեղեկությունների երեք խմբեր, որոնք չեն կարող գաղտնագրվել և պետք է անհապաղ հրապարակվեն: Դրանք, օրինակ, այն տեղեկություններն են, որոնք վերաբերում են քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև աղետներին և դրանց հետևանքներին: Այդ կարգի տեղեկությունների տրամադրումը (նույնիսկ եթե դրանք գաղտնի են համարվում) որևէ պաշտոնյայի կողմից չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն (Հոդված 14):

SU օրենքը պահանջում է, որ պետական մարմինները նշանակեն տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձանց՝ տեղեկություն ստանալու հարցումներն ընդունելու և դրանց ընթացք տալու համար:

SU օրենքի Հոդված 13-ում նշված է՝

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակված պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:
2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝
 - 1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,
 - 2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը,

3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:

Օրենքում նշված է, որ օրենքի խախտմամբ տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով կամ ՀՀ Քրեական օրենսգրքով սահմանված պատասխանատվություն:

Տեղեկատվության ազատության մասին դրույթներ են պարունակում «Քրեական դատավարության» և «Քաղաքացիական դատավարության» ՀՀ օրենսգրքերը, համաձայն որոնց քրեական գործերի դատական քննությունը և դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է՝ որոշ սահմանափակումներով, որոնք նախատեսված են օրենքով: «Քաղաքացիական դատավարության» ՀՀ օրենսգրքի Հոդված 8-ի համաձայն, գործերի քննությունը կարող է դռնփակ լինել, եթե խոսքը գնում է որդեգրման գործերի կամ քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու մասին: «Քրեական դատավարության» ՀՀ օրենսգրքի Հոդված 16-ի համաձայն, դռնփակ դատական քննություն անցկացվում է օրենքով նախատեսված դեպքերում՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք (2003թ.)

«Զանգվածային լրատվության մասին» օրենքը երաշխավորում է զանգվածային լրատվության միջոցների և զանգվածային լրատվության միջոցներում աշխատող լրագրողների՝ առանց անհիմն սահմանափակումների աշխատելու ընդհանուր իրավունքը: Այն վերահաստատում է տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու սահմանադրական իրավունքը: Այն արգելում է գրաքննությունը, «լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը», առանց ծանր հանցագործություններ բացահայտելու անհրաժեշտությամբ պայմանավորված դատարանի որոշման տեղեկատվության աղբյուրները բացահայտելը, և պահանջում է, որ պետական մարմինները նախապատվություն չտան առանձին լրագրողներին՝ ուրիշների հաշվին:

ՀՀ Քրեական օրենսգրք և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրք

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի՝ 2003 թ.-ի դեկտեմբերի 1-ին ընդունված փոփոխությունների համաձայն (Հոդված 1, կետ 1), տեղեկություններ տրամադրելու իր պարտականությունն ապօրինի չկատարելու դեպքում պաշտոնատար անձը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից հիսնապատիկի չափով, իսկ նույն խախտումը կրկնելու դեպքում՝ հիսնապատիկից հարյուրապատիկի չափով:

ՀՀ Քրեական օրենսգրքի Հոդված 148-ի համաձայն, անձին՝ անմիջականորեն նրա իրավունքներն ու օրինական շահերը շոշափող և սահմանված կարգով հավաքված փաստաթղթերը կամ նյութերը ներկայացնելուց պաշտոնատար անձի կողմից ապօրինի հրաժարվելը կամ անձին այդպիսի տեղեկությունը ոչ լրիվ կամ

դիտավորյալ աղավաղված ներկայացնելը, եթե դա տվյալ անձի իրավունքներին և օրինական շահերին վնաս է պատճառել, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

Հոդված 282-ով քրեականացված է շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ տեղեկություններ թաքցնելը: Այդ խախտումը կատարած պաշտոնատար անձը կարող է պատժվել ազատազրկմամբ կամ մինչև երեք տարի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով:

Սակայն, վարչական և քրեական այս պատժամիջոցներից և ոչ մեկն առ այսօր գործնականում չի կիրառվել: Դատական պրակտիկայում հայցվորները պահանջում են միայն տեղեկությունների տրամադրում և պետական տուրքի փոխհատուցում, և չեն պահանջում պատասխանող կողմի նկատմամբ պատժամիջոցների կիրառում:

Պետք է նշել նաև, որ Քրեական օրենսգիրքը հատուկ երաշխիքներ է նախատեսում լրագրողների տեղեկություններ ստանալու իրավունքի համար: Հոդված 164-ը պաշտպանում է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը, այդ թվում՝ տեղեկություններ ստանալու իրավունքը, որը լրագրողի մասնագիտական օրինական գործունեության մաս է կազմում:

Հոդված 164-ի համաձայն՝

- «1. Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով:
2. Նույն արարքները, որոնք կատարել է պաշտոնատար անձն իր պաշտոնական դիրքն օգտագործելով, պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

Պետք է նշել, որ առաջին անգամ այս հոդվածը կիրառվել է 2004 թ.-ի հոկտեմբերի 11-ին: Կոտայքի մարզի առաջին աստանի դատարանը մեղավոր է ճանաչել թիկնապահին, ով Ծաղկաձորում հարձակվել էր լրագրողների վրա և թույլ չէր տվել, որ վերջիններս լուսանկարեն: Դատարանը նրան դատապարտել էր վեց ամսվա ազատազրկման: Դա առաջին դեպքն էր Հայաստանում, երբ անձը դատապարտվել է ազատազրկման լրագրողների աշխատանքն ապօրինի խոչընդոտելու և տեղեկություններ ստանալու նրանց իրավունքը սահմանափակելու համար:

Բնապահպանական օրենսդրություն

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի Հանրապետությունը 1998 թ.-ին ստորագրել և 2001 թ.-ին վավերացրել է Օրհուսի կոնվենցիան: Կոնվենցիան երաշխավորում է մարդկանց՝ բնապահպանական տեղեկություններ ստանալու իրավունքը: Քանի որ խոսքը գնում է միջազգային պայմանագրի մասին, դրանում պարունակվող պարտավորություններն ուղղակիորեն տարածվում են ՀՀ կառավարության վրա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը պահանջում է, որ պետական մարմինները զանգվածային լրատվության միջոցներին տեղեկացնեն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունների մասին և հանրային լսումներ կազմակերպեն:

«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենք (2002թ.)

«Անհատական տվյալների մասին» օրենքը նախատեսում է, որ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի անվճար ստանալ իր մասին տեղեկություններ: Օրենքը քաղաքացուն նաև թույլ է տալիս ուղղել, ուղեփակել կամ ոչնչացնել իր մասին անհատական տվյալները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք (2004թ.)

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը քաղաքացիներին իրավունք է տալիս դիմումներ և բողոքներ ներկայացնել պետական մարմիններին: Օրենքը պահանջում է, որ քաղաքացիների դիմումներն ու բողոքները պատասխանվեն մեկ ամսվա ընթացքում:

Տեղեկատվության մերժում

«Տեղեկատվության ազատության մասին» օրենքի Հոդված 8-ում թվարկված են հինգ դեպքեր, երբ տեղեկատվությունը կարող է մերժվել: Դրանք այն դեպքերն են, երբ տեղեկությունները`

- 1) պարունակում են պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք,
- 2) խախտում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում` նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրային և այլ հաղորդումների գաղտնիությունը,
- 3) պարունակում են հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ,
- 4) բացահայտում են մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք),
- 5) խախտում են հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

Մրանք տեղեկություններ չտրամադրելու օրենքով նախատեսված հիմքեր են:

Այս հիմքերի առկայության դեպքում օրենքը չի դնում հանրային շահին սպառնացող վտանգը ցույց տալու պահանջ: Վնասն ապացուցելու պահանջը նախատեսված չէ օրենքով: Այնուամենայնիվ, նույն Հոդված 8-ի կետ 3-ով սահմանվում են մի շարք դեպքեր, երբ տեղեկատվությունը չի կարող մերժվել, նույնիսկ եթե տեղեկությունները պարունակում են կետ 1-ով նախատեսված հրապարակման ոչ ենթակա տվյալներ: Այսպես, տեղեկությունների տրամադրումը չի կարող մերժվել, եթե դրանք`

- 1) վերաբերում են քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաև տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին և դրանց հետևանքներին,
- 2) ներկայացնում են Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առևտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը,
- 3) չտրամադրումը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

Այս կարգի գաղտնի տեղեկությունների պաշտոնական հրապարակումը օրենքի առաջ պատասխանատվություն չի առաջացնում: Հոդված 14-ի կետ 2-ի համաձայն, ՏԱ օրենքի Հոդված 8-ի կետ 3-ով նախատեսված դեպքերում տեղեկությունների հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

Տեղեկատվությունը մերժելիս պետական մարմինը պետք է հիմնավորի մերժումը՝ հղում կատարելով օրենքով նախատեսված մերժման հիմքերին:

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք (1996թ.)

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը սահմանում է տեղեկությունների դասակարգման համապարփակ մի համակարգ:

Օրենքով պաշտպանվում են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ռազմական բնագավառին (այդ թվում՝ տեղեկություններ զինված ուժերի ռազմավարական և օպերատիվ պլանների, գորքերի ծավալման, ռազմարդյունաբերական համալիրի ծրագրերի, զինված ուժերի կառուցվածքի և տեղաբաշխման մասին), արտաքին հարաբերությունների և արտաքին տնտեսական գործունեության բնագավառին, տնտեսության, գիտության և տեխնիկայի բնագավառին (տեղեկություններ պաշտպանական ծրագրերի և ռազմամթերքի արտադրության, թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի, պետական պահուստների, պետության ֆինանսների և բյուջետային քաղաքականության մասին) և հետախուզական բնագավառին (տեղեկություններ հակահետախուզական գործունեության, հետախուզական մարմինների հետ համագործակցող անձանց, պետական ծածկագրերի և պետական ու ծառայողական գաղտնիքի պաշտպանության մասին):

«Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը նախատեսում է հատուկ դեպքեր, երբ տեղեկությունները չեն կարող գաղտնի պահվել: Այդ դեպքերը նման են «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով նախատեսված դեպքերին: Պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել քաղաքացիների անվտանգությանը և առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերի մասին տեղեկությունները, տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաև բնության և շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, ներքին առևտրի, մշակույթի բնագավառներում տիրող իրական վիճակը ներկայացնող տեղեկությունները, օրենքի խախտման կամ քաղաքացիների իրավունքների ոտնահարման մասին տեղեկությունները, կամ էլ այն

տեղեկությունները, որոնք, եթե դասվեն պետական և ծառայողական գաղտնիքի շարքին, ապա բացասական ազդեցություն կունենան կառավարության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական և հոգևոր-մշակութային զարգացման ծրագրերի վրա:

Սահմանված են գաղտնիության երեք աստիճաններ՝ «հատուկ կարևորության», «հույժ գաղտնի» և «գաղտնի»: Գաղտնիության առաջին երկու աստիճաններն ունեցող տեղեկությունները որպես գաղտնիք պահվում են մինչև 30 տարի: «Գաղտնի» գաղտնիության աստիճան ունեցող փաստաթղթերը համարվում են «ծառայողական գաղտնիքներ» և կարող են գաղտնի պահվել մինչև 10 տարի: Տեղեկություններին տրված գաղտնիության աստիճանը պետք է վերանայվի 5 տարին մեկ: Գաղտնագրման մասին որոշումը կարող է բողոքարկվել: Գաղտնագրված տեղեկությունները պետք է եռամսյա ժամկետում հանձնվեն պետական արխիվ:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք (2003թ.)

«Զանգվածային լրատվության մասին» օրենքի Հոդված 7-ով նախատեսված են որոշակի տեղեկությունների հրապարակման սահմանափակումներ: Այսպես՝ արգելվում է գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտող տեղեկությունների հրապարակումը: Արգելվում է նաև տեսաձայնագրմամբ ստացված տեղեկությունների տարածումը, եթե դրանք ստացվել են առանց տվյալ անձին տեսաձայնագրման մասին զգուշացնելու, բացի այն դեպքերից, եթե հրապարակումն «անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար»:

ՀՀ Քրեական օրենսգիրք

Քրեական օրենսգիրքը բազմաթիվ հոդվածներ է պարունակում, որոնք սահմանափակում են որոշ տեղեկությունների հրապարակումը: Դրանք են՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկությունների (Հոդված 144), բժշկական գաղտնիքի (Հոդված 145), նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների գաղտնիության (Հոդված 146), լրտեսության (Հոդված 302), պետական գաղտնիք հրապարակելու (Հոդված 306), պետական գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ վարվելու կանոնները խախտելու (Հոդված 307), նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու (Հոդված 342) մասին հոդվածները:

«Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենք (2002թ.)

«Անհատական տվյալների մասին» օրենքն անհատական տվյալների հավաքման և օգտագործման որոշ սահմանափակումներ է նախատեսում: Անհատական տվյալի սահմանումը բավականին լայն է, և այն բացահայտորեն չի բացառում իրենց պաշտոնական պարտականությունները կատարող պետական ծառայողների կամ պաշտոնյաների մասին տեղեկությունները, ինչի արդյունքում կառավարությունը կարող է որոշ փաստաթղթեր չտրամադրել պնդելով, որ դրանք անհատական տվյալներ են պարունակում: Օրենքը պետական գործունեության հետ

կապված անանուն անհատական տվյալներ պարունակող տվյալների բազաների, գրադարանների և արխիվային փաստաթղթերի մատչելիություն է նախատեսում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Կարիքների գնահատման շրջանակում ուսումնասիրվել է վեց երկրների՝ Բուլղարիայի, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի, Կիպրոսի, Ֆրանսիայի և Կանադայի փորձը SU բնագավառում: Ուսումնասիրությամբ պարզվել է.

- ա) Գրեթե բոլոր պետական մարմիններն ունեն հանրության հետ կապերի և տեղեկատվության/մամլո առանձին վարչություններ (կամ SU պատասխանատու հատուկ պաշտոնյաներ): Դրանցից առաջինը պատասխանատու է տվյալ մարմնից դեպի հանրություն տեղեկությունների հոսքի համար, որի նպատակն է խթանել (գովազդել) այդ մարմնի գործառույթներն ու գործունեությունը: Երկրորդը պատասխանատու է SU հարցումներ ընդունելու և դրանց պատասխանելու, ինչպես նաև SU օրենքներով պահանջվող տեղեկությունները հրապարակելու համար:

- բ) Վերոհիշյալ բոլոր երկրներում գործում է SU հարցերով հատուկ օմբուդսմեն կամ SU հանձնակատար, որը, մի կողմից, քաղաքացիներին օգնում է պետական մարմիններում պահվող տեղեկությունները ձեռքբերելու գործում և, մյուս կողմից, պետական պաշտոնյաներին աջակցում է իր խորհուրդներով այն դեպքերում, երբ վերջիններս դժվարանում են պահանջվող տեղեկությունները տրամադրելու մասին որոշումներ կայացնել: Քաղաքականապես և ֆինանսապես անկախ այս մարմինը պետական մարմինների (SU համար պատասխանատուների) և հանրության միջև կապող օղակի դեր է խաղում, փորձելով արդյունավետ լուծել դրանց միջև առաջացած խնդիրներն՝ առանց ժամանակ և ֆինանսական միջոցներ վատնելու:

Բուլղարիայի Հանրապետության կենտրոնական կառավարության և վարչական բարեփոխումների նախարարությունը պետական կառավարման համակարգում իրականացվող մյուս բարեփոխումներից բացի զբաղվում է նաև տեղեկատվության ազատության հետ կապված խնդիրներով: Մասնավորապես, բոլոր պետական մարմիններում ստեղծվել են հատուկ վարչություններ, որոնք պատասխանատու են տեղեկություններ հավաքելու, տրամադրելու և վերլուծելու համար: Այդ վարչությունների հիմնական առաքելությունը կայանում է քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու, քաղաքացիների առաջարկություններն ու բողոքները վերլուծելու և հետադարձ կապ հաստատելու մեջ: Ավելին, նրանք տվյալ հիմնարկի յուրաքանչյուր պաշտոնատար անձի պարտականությունների և քաղաքացիների իրավունքների մասին տեղեկությունները փակցնում են տեղեկատվական վահանակների վրա, որոնք գտնվում են այդ պաշտոնյաների գրասենյակների հարևանությամբ: Այդ վահանակների վրա հատուկ ընդգծվում է տեղեկություններ տրամադրելու պարտականությունը և տեղեկություններ ստանալու իրավունքը:

«Տեղեկատվության մատչելիության ծրագիր» անվանում ունեցող բուլղարական հայտնի ՀԿ-ներից մեկը հաճախ վերապատրաստման դասընթացներ և սեմինարներ է կազմակերպում Բուլղարիայում և Հարավ-Արևելյան Եվրոպայում տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը կիրառելու վերաբերյալ: Դասընթացներին մասնակցում են տեղական և պետական կառավարման մարմինների, ՋԼՄ-ների, ՀԿ-ների ներկայացուցիչներ և քաղաքացիներ: Դասընթացները կազմակերպվում են մի շարք բուլղարական և միջազգային գործընկերների աջակցությամբ: Դասընթացների նյութերի մի մասը տեղադրված է կազմակերպության վեբ-կայքում՝ www.aip-bg.org հասցեով:

Հանրության հետ կապերի գործառույթները և համապատասխան վարչությունների ու ծառայությունների գործունեությունը (տեղեկությունների հավաքում, տրամադրում և վերլուծություն) առանցքային դեր են խաղում Կիպրոսի Հանրապետության կառավարման համակարգում: Հատկապես կարևորվում է տեղեկությունների դասակարգման, պահպանման և տրամադրման էլեկտրոնային համակարգը: Էլեկտրոնային տեղեկատվական համակարգը քաղաքացիների կողմից տեղեկություններ ստանալը առավել դյուրին է դարձնում: «Մեկ պատուհան» էլեկտրոնային համակարգի միջոցով քաղաքացիները կարող են ծանոթանալ կառավարությունում պահվող տեղեկություններին և փաստաթղթերին՝ առանց ժամանակ կամ դրամ վատնելու: Վիճակագրական տվյալների համաձայն, տեղեկություններ պահանջող քաղաքացիների հարցումների 89.9 տոկոսը բավարարվում է 10 րոպեում:

Բուլղարիայում, Կիպրոսում և Ֆրանսիայում լայնորեն կիրառվում է կառավարման տարբեր մարմինների կառուցվածքի, գործունեության, կանոնադրության և վարվող քաղաքականության արդյունքների մասին տպագիր նյութերի, գրքույկների և ուղեցույցների տարածման պրակտիկան: Այդ փորձը կարելի է կիրառել նաև Հայաստանում, որպեսզի կառավարման մարմինների գործունեության մասին տեղեկություններն ավելի մատչելի լինեն քաղաքացիների համար:

Միացյալ Թագավորությունում տեղեկատվության ազատության խնդիրներին վերաբերող դասընթացները մտնում են Սահմանադրական հարցերի դեպարտամենտի (ՍՀԴ) պարտականությունների մեջ: Դեպարտամենտը պարբերաբար բազմաթիվ դասընթացներ է անցկացնում պաշտոնատար անձանց համար: Այն մշակել է նյութերի համապարփակ մի հավաքածու, որի նպատակն է ուղղություն ցույց տալ պետական սեկտորի ամենատարբեր ներկայացուցիչներին, որոնք առնչվում են ՏԱ-ի հետ: ՍՀԴ-ն կազմակերպում է նաև տեղեկատվության հետ կապված իրավունքների մասին հետբուհական դասընթացներ, որոնք որոշում կայացնողներին ոլորտի բարդ օրենսդրությունը և անընդհատ զարգացող նախադեպային իրավունքն ուսումնասիրելու հնարավորություն են ընձեռում: Դասընթացի ավարտին մասնակիցներն ստանում են համապատասխան որակավորում, որի շնորհիվ պետական ծառայության ոլորտում ստեղծվում է փորձառու և բանիմաց պաշտոնյաների մի բանակ: Պետության և կառավարման ոլորտի համատեքստում տեղեկատվության հետ կապված իրավունքների մասին ամբողջական և համապարփակ գիտելիքներ տրամադրելու նպատակով մշակվել է պաշտոնական ուսուցման դասընթաց: Այն մշակվել է ՍՀԴ-ի և Նորթումբրիայի համալսարանի կողմից և ուսուցանվում է հիմնականում հեռակա կարգով՝

ինտերնետի օգնությամբ: Դասընթացի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ձեռքբերել Նորթումբրիայի համալսարանի վեբ-կայքում՝ www.northumbria.ac.uk հասցեով:

Տեղեկատվության ազատության հարցերով հանձնակատարներ

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պաշտոնական փաստաթղթերին ծանոթանալու իրավունքի պաշտպանության լավագույն և ամենաարդյունավետ համակարգերից մեկը տեղեկատվության ազատության հարցերով հանձնակատարի կամ հանձնաժողովի ինստիտուտն է, ինչպիսիք գործում են, օրինակ, Ֆրանսիայում կամ Կանադայում: Պետք է նշել, որ այդ երկրներում տեղեկատվության ազատության հարցերով պաշտոնատար անձանց և հանրությանը կրթելու պարտականությունը դրված է ՏՄ հարցերով հանձնակատարի գրասենյակի վրա:

ՏՄ հարցերով հանձնակատարի գրասենյակը պետական մարմին է, որն իր գործառույթներն իրականացնելիս լիովին անկախ է կառավարությունից: Երկրների մեծ մասում այն հաշվետու է խորհրդարանների առջև և, ներքին դերից բացի նաև միջազգային դեր է խաղում:

ՏՄ հարցերով հանձնակատարների միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման ինստիտուտի ստեղծման նպատակը եղել և մնում է ՏՄ օրենսդրության կիրառումը, ինչը տեղեկություններ փնտրող քաղաքացիներին թույլ է տալիս ծանոթանալ պետական մարմիններում պահվող տեղեկություններին: Այս ինստիտուտի մյուս նպատակներից են՝ անձնական տեղեկությունների պաշտպանությունը և տեղեկատվության ազատության հետ կապված բացառությունների ռացիոնալացումը, որպեսզի տեղեկությունները գաղտնի պահվեն միայն այն դեպքում, եթե դա բխում է հանրության շահերից:

ՏՄ հարցերով հանձնակատարի գործառույթները պետք է ներառեն հետևյալը՝

- Ստուգել տարբեր մարմինների գործունեությունը, որը կապված է ՏՄ-ի հետ,
- Պատրաստել ՏՄ-ին վերաբերող տարեկան զեկույց,
- Հավաքել ՏՄ հարցումների և որոշումների վիճակագրական տվյալներ,
- Գովազդել ՏՄ օրենքը բնակչության շրջանում,
- Մշակել և հրապարակել ՏՄ օրենքի կատարման ուղեցույցներ,
- Կազմակերպել ուսուցում տարբեր գերատեսչությունների համար,
- Տրամադրել ՏՄ հարցումների հետ կապված տեղեկություններ, խորհուրդներ և աջակցություն (ներազդելու գործառույթ)
 - ՏՄ հարցման ցանկացած փուլում,
 - Դիմողի, գերատեսչության կամ երրորդ կողմից խնդրանքով,
- Տրամադրել խորհուրդներ ՏՄ օրենքի վերաբերյալ օրենսդրական քաղաքականության հարցում,
- Պաշտպանել անձնական տեղեկությունները,
- Ապահովել պաշտոնական տեղեկությունների մատչելիությունը, բացի այն դեպքերից, երբ կան տեղեկությունները չհրապարակելու հիմնավոր պատճառներ (օրինակ՝ հանրային անվտանգության նկատառումներ),

- Վերանայել SU հարցումների վերաբերյալ պետական մարմինների որոշումները (դիմելու դեպքում) և, անհրաժեշտության դեպքում, նոր, պարտադիր կատարման ենթակա որոշումներ կայացնել,
- Պարտադրել օրենքի կատարումը (օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկել այն անձանց, ովքեր անտեսում են իրենց պարտականությունները կամ հրաժարվում են դրանք կատարելուց),
- Կրթական գործառույթ (երկրի ողջ տարածքում պետական մարմինների համար կազմակերպել ուսուցողական համաժողովներ և ելույթներ):

Պարտականությունները՝

- Ապահովել, որ համապատասխան մարմինները տեղեկացված լինեն SU օրենքով նախատեսված իրենց պարտականությունների մասին,
- Ապահովել, որ հանրության ներկայացուցիչները տեղեկացված լինեն SU օրենքի և իրենց իրավունքների մասին,
- Աջակցություն տրամադրել հանրության ներկայացուցիչներին և պետական մարմիններին՝ SU օրենքի հետ կապված հարցերում,
- Խորհրդարանին առաջարկել, թե ինչ օրենսդրական կամ վարչական փոփոխություններ են անհրաժեշտ SU օրենքի նպատակներին հասնելու համար:

Ծառայությունները՝

- Հրապարակել ուղեցույցներ և տեղեկություններ, որոնք պետք է խրախուսեն համապատասխան մարմինները և օգնեն անհատներին իրենց իրավունքները ճիշտ պատկերացնելու հարցում,
- Լուծել մարդկանց կողմից բերված համապատասխան վեճերը,
- Վարել տեղեկատվություն տնօրինողների հանրային մատյան,
- Հաստատել SU օրենքի համաձայն պետական մարմինների կողմից ընդունված հրապարակման ծրագրերը,
- Պատասխանատվության ենթարկել օրենքը խախտողներին,
- Ելույթներ ունենալ տարբեր խմբերի առջև՝ օրենքի և դրա կիրառման մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու համար,
- Ազդել անձնական կյանքի գաղտնիության և տեղեկատվության մատչելիության մասին քննարկումների վրա:

Ինչի վրա է տարածվում՝

- Անձնական տեղեկություններ, պաշտոնական տեղեկությունների մատչելիության խրախուսում,
- Տվյալների պաշտպանություն,
- Անձնական կյանքի գաղտնիություն և էլեկտրոնային հաղորդակցություն,
- Տեղեկատվության ազատություն,
- Միջոցների և ռեսուրսների տրամադրում:

Լիազորությունները՝

Եթե Հանձնակատարը կարծում է, որ սխալ որոշում է կայացվել, ապա նա կարող է պահանջել, որ նոր որոշում կայացվի: Նա կարող է նաև պահանջել, որպեսզի այն անձը, որը տիրապետում է գործին կամ քննությանը վերաբերող տեղեկություններին, դրանք հաղորդի Հանձնակատարին: Ավելին, նա կարող է պահանջել, որ այդ անհատն անձամբ ներկայանա և տրամադրի վերոհիշյալ տեղեկությունները: Հանձնակատարը կարող է մուտք գործել ցանկացած պետական մարմին և պահանջել, որ այնտեղ ներկա գտվնող անձինք նրան փաստաթղթեր տրամադրեն, որոնք կարող են պատճենահանվել և ողջամիտ ժամկետով պահվել Հանձնակատարի մոտ: Նա ցանկացած պահի կարող է քննել պետական մարմինների կողմից որդեգրված **պրակտիկան և կարգերը**:

Հանձնակատարի հսկողական գործառույթների կատարմանը խոչընդոտելը համարվում է իրավախախտում, որի համար մեղավոր անձը կարող է տուգանվել կամ ազատազրկվել (կամ՝ երկուսն էլ): Փաստաթղթերի տրամադրումը նախատեսված ժամկետից ուշացնելը Հանձնակատարի կողմից դիտվում է որպես տրամադրման մերժում: Փաստաթղթերի թերի պահպանումը/կառավարումը տրամադրման մերժման համար ընդունելի պատճառ չի համարվում:

Գործունեության ձևերը՝

- Լսումներ,
- Ուսուցում,
- Դատական քննություն (SU հարցերով հանձնաժողովի իրավաբաններն իրավունք ունեն Հանձնաժողովը ներկայացնել վերջինիս հետ առնչվող բոլոր հարցերում և պաշտպանել հանձնաժողովի բողոքարկված որոշումները գերագույն կամ վերաքննիչ դատարաններում):

Ով կարող է դիմել SU հարցերով հանձնակատարին

Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որին իրավունք չի տրվել ծանոթանալու հանրային տեղեկությունների, գրառումների կամ փաստաթղթերի հետ կամ չի տրամադրվել դրանց պատճենը, կամ որին մերժվել է պետական մարմնի նիստերին մասնակցելու հնարավորությունը, կարող է որոշակի ժամկետներում, որոնք տարբեր երկրներում տարբեր են (սովորաբար՝ 20-30 օր), բողոք ներկայացնել սովյալ պետական մարմնի դեմ:

Հայաստանում բողոքարկման անկախ համակարգի գործառույթներն իրականացնում է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Սակայն, տեղեկատվության մատչելիության իրավունքի պաշտպանությունը մտնում է Մարդու իրավունքների պաշտպանի ընդհանուր պարտականությունների շրջանակի մեջ, ինչը նվազեցնում է SU օրենքի և այդ իրավունքի պաշտպանության արդյունավետությունը: Խիստ նպատակահարմար է, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում տեղեկատվության ազատության հետ կապված դիմումներով զբաղվի առանձին ներկայացուցիչ կամ աշխատակիցների խումբ: Վերոհիշյալ մի քանի երկրների՝ SU հարցերով հանձնակատարների հետ կապված փորձն օգտակար է:

*SU ՕՐԵՆՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ*

Հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաների 95 տոկոսը (կամ 99 հոգի) նշել է, որ տեղյակ է ՀՀ SU օրենքի գոյության մասին: Միայն 5 տոկոսն է (կամ 5 հոգի) տվել բացասական պատասխան: Մա հիանալի ցուցանիշ է, քանի որ նախկինում SU օրենքի գոյության և դրա պահանջներին տեղյակ պաշտոնյաների թիվն ավելի փոքր էր (2004 թ.-ին այն կազմել է 75 տոկոս): Չնայած հարցվածների 95 տոկոսը տեղյակ է օրենքի գոյության մասին, սակայն օրենքի պահանջներին ծանոթ է հարցվածների ընդամենը 88.4 տոկոսը (2004 թ.-ին այդ ցուցանիշը կազմել է 50 տոկոս): 12 հոգի (կամ 11.5 տոկոսը) խոստովանել են, որ երբեք օրենքը չեն կարդացել: Այնուամենայնիվ, օրենքի պահանջներին ծանոթ պաշտոնատար անձանց թվի մեծությունը դեռ չի նշանակում, որ նրանք բոլորը պատշաճ ձևով կիրառում են օրենքն իրենց առօրյա գործունեության մեջ: Այս նկատառումը հիմնված է այն փաստի վրա, որ շատ քչերն են կարողացել SU օրենքի կիրառման կոնկրետ օրինակներ բերել իրենց փորձից: Ոչ բոլորն են (ընդամենը 54 տոկոսը) կարողացել ներկայացնել SU օրենքի որևէ կոնկրետ դրույթ: Այնուամենայնիվ, պաշտոնյաների ճնշող մեծամասնությունը քաջատեղյակ է, որ նրանք պարտավոր են տեղեկություններ տրամադրել հանրությանը, և որ տեղեկություն ստանալը յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքն է:

SU բնագավառում միջազգային չափանիշների և պրակտիկայի մասին պաշտոնյաների գիտելիքների մակարդակը համեմատաբար սահմանափակ է: 46 հոգի (կամ 44 տոկոսը) տեղյակ են SU-ի վերաբերյալ միջազգային չափանիշների կամ փաստաթղթերի գոյության մասին: 48 տոկոսը (կամ 50 հոգի) խոստովանել է, որ ծանոթ չէ SU վերաբերյալ միջազգային չափանիշներին: 54 հոգի հրաժարվել է այդ հարցին պատասխանելուց: Դրական պատասխան տված պաշտոնյաների բարձր տոկոսն այս դեպքում նույնպես չի արտացոլում իրական պատկերը: Օրինակ՝ պաշտոնյաներից մեկը, պնդելով, որ ծանոթ է SU միջազգային չափանիշներին, այդպես էլ չկարողացավ SU-ին վերաբերող որևէ կոնկրետ միջազգային փաստաթղթի անվանում տալ: Փոխարենը նա հիշատակեց Ռուսաստանի Դաշնության SU օրենքի նախագիծը:

Հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաներից ընդամենը 17.5 տոկոսն է ծանոթ եղել Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածին, 4 հոգի հիշատակել են Օրհուսի կոնվենցիան, որոնցից երկուսը ներկայացնում են ՀՀ բնապահպանության նախարարությունը, և տեղեկություններ են տրամադրում Օրհուսի կոնվենցիայի համաձայն :

Հարցվածների 90.3 տոկոսը (կամ 94 հոգի) դրական պատասխան է տվել այն հարցին, թե արդյոք «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը բարելավելու է իրավիճակը: Հարցազրույցների մասնակիցները կարծում են, որ SU օրենքն արդեն իսկ էական դրական փոփոխություններ է առաջ բերել: 4 հոգի այդ կարծիքին չեն և պնդում են, որ ոչ մի դրական փոփոխություն չի կարելի ակնկալել: Երկու հոգի դժվարացել են միանշանակ պատասխան տալ: ՀՀ առողջապահության նախարարությունը ներկայացնող և SU օրենքին տեղյակ պաշտոնյաներից մեկն ասել է, որ, թեև ինքը քաջ ծանոթ է SU օրենքին, իր կարծիքով, օրենքը որևէ փոփոխություն չի մտցրել քաղաքացի-լրագրող-պետական պաշտոնյա հարաբերություններում: Ինչպես դրական, այնպես էլ բացասական պատասխաններ տված պաշտոնյաների հիմնական մտահոգությունը կապված է SU օրենքի կիրառման անբավարար

մակարդակի հետ: Նրանց խոսքերով՝ օրենքն արդյունավետ կիրառելու համար անհրաժեշտ է, որ հասարակությունն ակտիվ օգտվի նրանից և պաշտոնյաներն այն կիրառեն իրենց առօրյա աշխատանքում: ՏՄ օրենքը կարող է բավարար լինել Հայաստանում պաշտոնական տեղեկությունների լիակատար մատչելիություն ապահովելու համար, եթե այդ օրենքը կիրառող պաշտոնյաները և օրենքից օգտվող լրագրողներն ու քաղաքացիները քաջատեղյակ լինեն օրենքի դրույթներին:

Մարզպետարաններից մեկի ներկայացուցիչը նշել է, որ ՏՄ օրենսդրությունը կարելի է լիովին կիրառելի և արդյունավետ դարձնել ՏՄ օրենքում որոշ փոփոխություններ կատարելուց հետո միայն: Օրենքի արդյունավետությանը թերահավատորեն վերաբերվող մարզային պաշտոնյաներից մեկի կարծիքով, օրենքը որոշ չափով սահմանափակում է լրագրողների իրավունքները, որովհետև այսօր, օրենքն ընդունելուց հետո, պաշտոնյաները լրագրողների հարցումներին կարող են պատասխանել հնգօրյա ժամկետում, մինչդեռ նախկինում նրանք այդ հարցումներին պատասխանում էին անմիջապես կամ հնարավորինս շուտ: Մեկ այլ պաշտոնյայի կարծիքով, ՏՄ օրենքը որոշ չափով հակասում է գաղտնիքներ սահմանող այլ օրենքներին:

Մի շարք պաշտոնյաներ նշել են, որ ՏՄ օրենքի լիակատար կիրառման համար կառավարությունը պետք է ընդունի տեղեկությունների տրամադրման կարգը, որպեսզի տեղեկությունների տրամադրման գործընթացը լինի միասնական և արդյունավետ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՓՈՐՁԸ


Հարցազրույցներին մասնակցած պաշտոնատար անձանց 87.5 տոկոսը (91 հոգի) համարում է, որ պաշտոնական վեբ-կայքերը պաշտոնական տեղեկություններ տարածելու ամենաարագ և ամենաարդյունավետ միջոցն են: (Համեմատության համար նշենք, որ 2004 թ.-ին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի անցկացրած հարցման տվյալներով, պաշտոնյաների 77.5 տոկոսի համար տեղեկատվության տարածման ամենաարագ միջոցը ՁԼՄ-ներն էին, իսկ հարցվածների 32.5 տոկոսը բացասական կարծիք ուներ տեղեկատվության տարածման հարցում պաշտոնական վեբ-կայքերի արդյունավետության մասին): Այս ամենը ցույց է տալիս, որ ժամանակի ընթացքում պաշտոնյաները հասկացել են իրենց գործունեությունը հանրության համար ավելի հրապարակային դարձնելու գործում պաշտոնական վեբ-կայքերի կարևորությունը:

ՀՀ գլխավոր դատախազության մամլո քարտուղարի խոսքերով, սակայն, Հայաստանում շատ քչերն ունեն ինտերնետից օգտվելու հնարավորություն. ուստի, տեղեկություններ ստանալու համար մարդիկ ավելի հաճախ դիմում են ՁԼՄ-ներին կամ այլ միջոցներին, և ոչ թե պաշտոնական վեբ-կայքերին: Հարցվածների 66 տոկոսը (կամ 63 հոգի) կարծում է, որ ՁԼՄ-ները տեղեկություններ տարածելու ամենաարդյունավետ միջոցն են, հատկապես հեռուստատեսությունը, որն, իրենց խոսքերով, ամենաազդեցիկ և արդյունավետ լրատվամիջոցն է: Տեղեկություններ տարածելու երկրորդ ամենաարդյունավետ միջոցն են համարվել մամլո ասուլիսները (45 տոկոս, կամ 47 հոգի): Ընդ որում, այս ցուցանիշը նույնն է, ինչ 2004 թ.-ի հարցման արդյունքում ստացված ցուցանիշը: Ամենափոքր կարևորությունը տրվել է տեղեկություններ ստանալու հարցումներին պատասխանելու պրակտիկային (32

հոգի, կամ 31 տոկոս), քանի որ շատերը կարծում են, որ գրավոր ամբողջական տեղեկություններ տրամադրելն անիրատեսական է:

Պատասխաններն ամփոփ տեսքով ներկայացված են Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Պաշտոնական տեղեկությունների տրամադրում



Պաշտոնական վեբ-կայքեր: Քանի որ հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաների ճնշող մեծամասնության կարծիքով տեղեկությունների տարածման ամենաարագ և ամենաարդյունավետ միջոցներից մեկն ինտերնետն է, աշխատանքային խումբը փորձել է պարզել, թե որքան հաճախ են թարմացվում պաշտոնական վեբ-կայքերը և արդյոք դրանք պարունակում են հանրային կարևորության տեղեկություններ: Դիտարկումները ցույց են տվել, որ ուսումնասիրված մարմիններից գրեթե բոլորը՝ ինչպես Երևանում գտվող պետական մարմինները, այնպես էլ մարզային կառույցները, ունեն պաշտոնական վեբ-կայքեր: Սակայն այդ վեբ-կայքերից շատերը տվյալ մարմնի գործունեությունը ներկայացնելու (գովազդելու), և ոչ թե հանրային նշանակության տեղեկություններ տարածելու նպատակ են հետապնդում: Ավելին, պետական մարմինների վեբ-կայքերը թարմացվում են ոչ պարբերաբար: Հետևաբար, դրանք չեն ծառայում իրենց հիմնական նպատակին:

Որոշակի խումբ տեղեկությունների պարտադիր հրապարակման պահանջը, որն ամրագրված է SU օրենքի Հոդված 7-ում, վեբ-կայքի կամ այլ միջոցներով չի կատարվում: Հարցազրույցները ցույց են տվել, որ 104 պաշտոնատար անձանցից 97-ը տեղյակ են որոշ կարգի տեղեկություններ պարբերաբար հրապարակելու պարտավորության մասին: Սակայն իրականությունը ճիշտ հակառակի մասին է վկայում: Նախարարների և մարզպետների որոշումները չեն տեղադրվում պաշտոնական վեբ-կայքերում: Օրինակ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության վեբ-կայքում նախարարի որևէ որոշում տեղադրված չէ: Արագածոտնի մարզպետարանի պաշտոնական վեբ-կայքում մարզպետի վերջին հրապարակված որոշումն ընդունվել է 2006 թ.-ի հոկտեմբեր ամսին, իսկ Արմավիրի մարզպետարանի վեբ-կայքում ընդհանրապես մարզպետի որոշումներ չկան: Որոշ պետական մարմինների վեբ-կայքերն ընդհանրապես չեն գործում: Չեն օգտագործվում նաև էլեկտրոնային փոստի հասցեները, որոնք նշված են վեբ-կայքերում և որոնցով մարդիկ պետք է կարողանան դիմել և արագ ու արդյունավետ

կարգով տեղեկություններ ստանալ: Օրինակ՝ պարզելու համար, թե կատարվում է արդյոք բոլոր դիմումներին պատասխանելու խոստումը, հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարության պաշտոնական վեբ-կայքի (www.gov.am) միջոցով, սակայն որևէ պատասխան, նույնիսկ մերժում, չի ստացվել:

Այնուամենայնիվ, կան նաև դրական օրինակներ: Այսպես՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և ՀՀ գլխավոր դատախազության վեբ-կայքերը պարբերաբար թարմացվում են, իսկ դրանցում տեղադրված տեղեկությունները հիմնականում ուղղված են հանրությանը: Մեծագույն խնդիր է մնում հանրության կողմից ինտերնետից օգտվելու ցածր մակարդակը: Ինտերնետից օգտվողների թիվը խիստ սահմանափակ է, հատկապես մարզերում:

16 նախարարություններից 15-ն ունեն պաշտոնական վեբ-կայքեր: Միայն քաղաքաշինության նախարարությունը վեբ-կայք չունի: Տարածքային կառավարման նախարարության վեբ-կայքը ուսումնասիրման ընթացքում չի բացվել և չի գործել:

15 նախարարությունների վեբ-կայքերից ընդամենը 6-ն ունեն «Որոշումներ» բաժինը, որտեղ պետք է տեղադրվեն ՀՀ կառավարության և համապատասխան նախարարների որոշումները: Դրանք են՝ ՀՀ առողջապահության, արդարադատության, բնապահպանության, կրթության և գիտության, սպորտի և երիտասարդության հարցերի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները: Սակայն այդ բաժիններում տեղադրված որոշումներն ընդունվել են դեռ 2006 թ.-ին (օրինակ՝ արդարադատության նախարարության վեբ-կայքում ընդամենը մեկ որոշում է տեղադրված, որն ընդունվել է 2006 թ.-ի հուլիսի 7-ին): ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության վեբ-կայքի «Որոշումներ» բաժինը չի գործում: ՀՀ կրթության և գիտության նախարարության վեբ-կայքում տեղադրված են 30 որոշումներ, որոնցից վերջինն ընդունվել է 2007 թ.-ի հունիսի 14-ին: Կարելի է ասել, որ, մյուսների համեմատ, սա ամենաթարմ որոշումն է:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը մանրամասն ուսումնասիրել է ՀՀ գլխավոր դատախազության, ոստիկանության, պաշտպանության նախարարության և ազգային անվտանգության ծառայության վեբ-կայքերը: Ստորև ներկայացված է ընդհանուր պատկերը:

ՀՀ դատախազության պաշտոնական վեբ-կայքում (www.genproc.am) տեղադրված են օրենսդրությունը և վիճակագրական տվյալներ: Տեղեկություններ կան նաև դատախազության գործառույթների և կառուցվածքի, ինչպես նաև քաղաքացիների ընդունելության կարգի մասին: Կարելի է գտնել որոշ տեղեկություններ այն մասին, թե 2007 թ.-ի պետբյուջեից որքան գումար է հատկացվել դատախազությանը: Վեբ-կայքում տեղադրված են նաև աշխատակիցների ցանկը և թափուր տեղերի մասին գլխավոր դատախազի հրամանները: Մամլո քարտուղարի խոսքերով, դատախազությունն օրական 1-ից 3 տեղեկատվության հարցում է ստանում էլեկտրոնային փոստով:

ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական վեբ-կայքը (www.mil.am) պարունակում է մի շարք տեղեկություններ, որոնց հրապարակումը պարտադիր է օրենքով: Պաշտպանության նախարարության վեբ-կայքը միակն է մեր ուսումնասիրվածներից, որտեղ նշված է վերջին երեք տարիների ընթացքում պետական բյուջեից հատկացված գումարների չափը: Վեբ-կայքում տեղադրված է նաև պաշտպանության նախարարության աշխատակիցների ցանկը, որում նշված են նրանց անուններն ու ազգանունները, պաշտոնը և աշխատավայրի հեռախոսահամարները: Այստեղ կարելի է ծանոթանալ նախարարությունում

աշխատանքի ընդունվելու պայմաններին: Մարդիկ ավելի հաճախ են իրենց դիմումներն էլեկտրոնային փոստով ուղարկում՝ press@mail.ru հասցեով: Լրատվամիջոցների և հանրության հետ կապերի վարչության պետի խոսքերով, նախարարությունն օրական 3-ից 5 նամակ է ստանում էլեկտրոնային փոստով, ինչի արդյունքում գրավոր դիմումների քանակը կիսով չափ կրճատվել է:

Թեև ՀՀ ոստիկանության պաշտոնական վեբ-կայքը (www.police.am) պարունակում է պարտադիր հրապարակման ենթակա որոշ տեղեկություններ (աշխատանքի անցնելու պայմանները, քաղաքացիների ընդունելության կարգը, օրերն ու ժամերը), այնուամենայնիվ հանրային հետաքրքրություն ներկայացնող որոշ կարևոր տեղեկություններ բացակայում են: Մասնավորապես, հրապարակված չէ 2007 թ.-ի պետական բյուջեից ոստիկանությանը հատկացված գումարի չափը: «Ստորաբաժանումներ» բաժինը 2006 թ.-ից գտնվում է «հաստատման փուլում»:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության վեբ-կայքում (www.sns.am) ընդհանրապես բացակայում են պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները (աշխատանքի ընդունվելու պայմանները, քաղաքացիների ընդունելության կարգը, օրերն ու ժամերը, 2007 թ.-ի պետական բյուջեից հատկացված գումարի չափը): Ըստ էության, սա հանրությանն ուղղված ամենաքիչ տեղեկություններ պարունակող վեբ-կայքն է: Դրանց փոխարեն վեբ-կայքում տեղադրված են տեղեկություններ ազգային անվտանգության ծառայության կառուցվածքի մասին, ղեկավարի կենսագրությունը, ծառայության պատմությունն ու խորհրդանիշները: «Օրենսդրություն» բաժնում տեղադրված են 4 օրենքներ, որոնք վերաբերում են ազգային անվտանգության մարմիններին և սահմանապահ գորքերին: «Մամուլի կենտրոն» բաժնում տեղադրված են ազգային անվտանգության ծառայության մամուլի հաղորդագրությունները: Այստեղ բացակայում են ՏԱ օրենքով պարտադիր հրապարակման ենթակա բոլոր տեղեկությունները:

Հատկանշական է, որ վերոհիշյալ պաշտոնական վեբ-կայքերից և ոչ մեկը չի պարունակում ոչ՝ տեղեկատվության գրավոր հարցման ձևեր, ոչ՝ էլ դրանց վերաբերող հրահանգներ, ինչը նախատեսված է ՏԱ օրենքով: Վեբ-կայքերի թարմացման համար պատասխանատուների խոսքերով, քաղաքացիներն իրենք պետք է որոշեն, թե ինչ ձև պետք է ունենան իրենց դիմումները և ինքնուրույն կազմեն դրանք: Որպես արդյունք, հարցումների մի մասը սխալ է կազմվում, քանի որ դրանք չեն պարունակում ՏԱ օրենքով պահանջվող բոլոր տեղեկությունները: Դա պաշտոնատար անձանց թույլ է տալիս ընթացք չտալ այդ հարցումներին և դրանք թողնել անպատասխան:

Հարցումներին ընթացք տալը. Հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաների 83 տոկոսը (կամ 86 հոգի) նշել է, որ իրենց գերատեսչությունում ստացված հարցումները գրանցվում են: 14-ն ասել են, որ դա նրանց պարտականությունների մեջ չի մտնում, 2-ը չգիտեին, իսկ 2-ը հաստատել են, որ տեղեկություններ ստանալու հարցումներն իրենց գերատեսչությունում չեն գրանցվում: Հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաներն ասել են, որ լրագրողների հետ շփվելիս նախընտրում են բանավոր հաղորդակցությունը, որպեսզի շփումներն առավել կենդանի լինեն: Բանավոր հարցումներին պատասխան է տրվում անհապաղ, կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Պետական մարմինները գրանցում են միայն գրավոր հարցումները: Այդ պատճառով հնարավոր չէ պարզել քաղաքացիների և/կամ լրագրողների հարցումների իրական թիվը: Ստացված գրավոր հարցումների թիվը հիմնարկից

հիմնարկ տատանվում է: 2007 թ.-ի երրորդ եռամսյակում տարբեր մարմիններում ստացված հարցումների թիվը տատանվել է 3-ից մինչև 30 հազար: Հարցումների ամենափոքր քանակը գրանցվել է Լոռու մարզպետարանում, իսկ ամենամեծը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունում՝ կազմելով 30 հազար: Ընդհանուր առմամբ, ամենամեծ թվով հարցումներ ստանում են նախարարությունները, իսկ ամենափոքր՝ մարզպետարանները: Դա ապացուցում է, որ մարզերի բնակչությունն ավելի վատ է տեղեկացված այն մասին, որ օրենքով իրավունք ունի գրավոր հարցումներ ուղարկել և տեղեկություններ ստանալ: Դա նաև ցույց է տալիս, որ մարզերի բնակչությունը նախընտրում է մարզային կառույցներից տեղեկություններ ստանալու ոչ պաշտոնական եղանակները: Գրեթե բոլոր կառույցների ներկայացուցիչները նշել են, որ իրենց ուղղված բանավոր հարցումների թիվն ահռելի մեծ է, սակայն դրանք պաշտոնապես չեն գրանցվում:

Գրավոր հարցումները գրանցվում են ընդհանուր մատյաններում և չեն առանձնացվում որպես տեղեկություններ պահանջող հարցումներ, որոնց պատասխանելու համար այլ պայմաններ են նախատեսված՝ ՏՍ օրենքի համաձայն: Ի միջի այլոց, որոշ պետական մարմիններ շարունակում են կիրառել նախկինում գործող 15-օրյա ժամկետը, մինչդեռ ՏՍ օրենքը պահանջում է, որ տեղեկություններ ստանալու հարցումներին պատասխան պետք է տրվի հնգօրյա ժամկետում:

Թեև տեղեկություններ ստանալու իրավունքը յուրաքանչյուրին է և ՏՍ օրենքը որեւէ հատուկ արտոնություններ լրագրողների համար չի նախատեսում, սակայն իրականում որոշ պաշտոնյաներ ավելի պատրաստակամությամբ են տեղեկություններ տրամադրում լրագրողներին, քան շարքային քաղաքացիներին:

Հարցազրույցներից պարզվել է, որ 16 պաշտոնյաներ (կամ 15.3 տոկոսը) կարծում են, որ լրագրողները պետք է տեղեկություններ ստանալու արտոնություններ ունենան, քանի որ նրանք միջնորդ են պետության և հասարակության միջև: Հարցվածների 81 տոկոսը (կամ 84 հոգի) տեղեկություններ տրամադրելիս որևէ տարբերություն չի դնում շարքային քաղաքացիների և լրագրողների միջև: Նրանք պնդում են, որ հասարակության բոլոր անդամները տեղեկություններ ստանալու հավասար իրավունք ունեն: 4 հոգի դժվարացել է պատասխանել այս հարցին:

«Ձեր գերատեսչությունը/վարչությունը/բաժինն ունի՞ տեղեկություններ տրամադրելու կարգ (քաղաքացիների ընդունելության ժամեր, կանոններ և ուղեցույցներ, մամլո պատասխանատուներ և այլ) և մեխանիզմներ (ձևեր, որոնման հնարավորություն տվող արխիվներ և այլ)» հարցին հարցվածների 83 տոկոսը (կամ 86 հոգի) դրական պատասխան է տվել: Շատ նախարարություններ ունեն տեղեկություններ տրամադրելու հատուկ ընթացակարգեր: Օրինակ՝ ՀՀ առողջապահության և բնապահպանության նախարարություններում գործում են տեղեկատվական կենտրոններ, որտեղ լրագրողներն ու քաղաքացիները կարող են ստանալ իրենց հետաքրքրող տեղեկությունները՝ օգտվելով տարբեր տեխնիկական միջոցներից և ռեսուրսներից: Լոռու, Գեղարքունիքի և Տավուշի մարզպետարանները նույնպես լավ պայմաններ ունեն: Նրանք հատուկ տեղեկատվական կենտրոններ ունեն, որտեղ ընդունվում են հարցումները, և մարդիկ ստանում են իրենց հետաքրքրող տեղեկությունները: Գեղարքունիքի և Տավուշի մարզպետարանները հատուկ ուղեցույցներ են հրատարակել քաղաքացիների համար, որոնցում բացատրվում է, թե ում պետք է դիմել այս կամ այն տեղեկության կամ ծառայության համար, ինչպես դիմել, ինչպես կազմել հարցումը, տրամադրվում են նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ:

ՀՀ կառավարությունը ստեղծել է մի աշխատանքային խումբ, որի մեջ մտնում են անվտանգության և պաշտպանության ոլորտի մարմինների հանրության հետ կապերի պատասխանատուները: Խմբի նպատակն է՝ մշակել հանրությանը տեղեկատվություն տրամադրելու հայեցակարգ: Աշխատանքային խմբի կազմում են ՀՀ նախագահի աշխատակազմի, Ազգային ժողովի, կառավարության, արտաքին գործերի և պաշտպանության նախարարությունների և ոստիկանության հանրության հետ կապերի պատասխանատուները: Նախատեսվում է նախ ընդունել հանրությանը տեղեկություններ հաղորդելու միասնական հայեցակարգ, որից հետո յուրաքանչյուր մարմին պետք է ընդունի իր հայեցակարգը, որը պետք է հիմնված լինի հիմնական հայեցակարգի վրա: Սակայն այս ուսումնասիրությունը կատարելու պահին որևէ վերջնական փաստաթուղթ դեռևս ընդունված չէր: ՀՀ պաշտպանության նախարարության հանրության հետ կապերի վարչության պետի կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն, պաշտպանության նախարարությունը միակ պետական մարմինն է, որն ունի հանրությանը տեղեկություններ տրամադրելու ներքին ռազմավարության նախագիծ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶՍՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏԵՐԸ

Ուսումնասիրության այս մասում պարզաբանվում է, թե հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաները որոնք են համարում տեղեկատվության ազատության հիմնական խոչընդոտները: Ինչպես պատկերված է 2-րդ աղյուսակում, պատասխանելով «Ինչու՞ են քաղաքացիները դժվարությամբ տեղեկություններ ստանում» հարցին, 77 պաշտոնյաներ նշել են, որ մարդիկ տեղյակ չեն իրենց իրավունքների մասին, իսկ 39-ը նշել են, որ պատճառը իշխանությունների՝ գաղտնի աշխատելու մտածելակերպն է: Հարցվածներից 24-ն ասել են, որ պատճառներից մեկն էլ այն է, որ պաշտոնյաները չեն կատարում օրենքով նախատեսված իրենց պարտականությունները: 32 հոգի նշել է, որ գործող օրենսդրությունը բավարար է, թեև համապատասխան ենթաօրենսդրական կարգերը դեռ չեն մշակվել: Մա կարևոր հայտարարություն է, քանի որ չպետք է մոռանալ, որ 2003 թ.-ին ՏԱ օրենքն ընդունելուց հետո ՀՀ կառավարությունը դեռ չի մշակել և չի ընդունել երկու կարևոր ենթաօրենսդրական ակտեր, որոնք նախատեսված են ՏԱ օրենքով և որոնք պետք է հստակեցնեն տեղեկություններ տրամադրելու կարգը, ինչպես նաև կազմակերպությունների ներսում տեղեկություններ հավաքելու, պահպանելու և դասակարգելու կարգը: Այս խնդիրը հիմնականում բարձրացվել է մարզային կառույցների պաշտոնյաների (օրինակ՝ Կոտայքի, Գեղարքունիքի և Արարատի մարզերից), ինչպես նաև ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և հարկային պետական ծառայության աշխատակիցների կողմից:

Հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաներից 12-ը նշել է, որ ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ պետական մարմիններում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնյաների նշանակման գործընթացը չափազանց դանդաղ է ընթանում: ՏԱ օրենքի համաձայն, տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնյաներ պետք է նշանակվեն բոլոր պետական մարմիններում:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կառավարությունը չունի տեղեկություններ տրամադրելու միասնական համակարգ: Տարբեր մարմիններում տեղեկություններ տրամադրելու գործառնությունը դրված է տարբեր վարչությունների,


բաժինների և մասնագետների վրա: Դա նվազեցնում է կառավարությունից դեպի հասարակություն տեղեկությունների հոսքի արդյունավետությունը: Այսօրվա դրությամբ մարզպետարաններից միայն Գեղարքունիքի և Տավուշի մարզպետարաններն ունեն հանրության հետ կապերի վարչություններ: Մյուս մարզպետարաններում այդ գործառույթը դրված է սպորտի և մշակույթի կամ կրթության վարչությունների, քարտուղարության կամ էլ մամլո խոսնակների վրա, որոնք հիմնականում աշխատում են լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Վերջերս մի դրական փոփոխություն է նկատվել. կառավարությունը 2007 թ.-ի սեպտեմբերի 20-ին ընդունել է թիվ Ն-1083 որոշումը, որի համաձայն բոլոր մարզպետարաններում պետք է ստեղծվեն մամուլի և հանրության հետ կապերի բաժիններ:

Հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաներից մեկը պնդել է այն կարծիքը, որ հիմնական խնդիրն այն է, որ մարդիկ վստահություն չունեն կառավարման համակարգի հանդեպ:

Պատասխաններն ամփոփ տեսքով ներկայացված են գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2. Հիմնական խոչընդոտներ

77



Հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաները մի քանի գաղափարներ են առաջ քաշել ուղղված վերոհիշյալ խոչընդոտների հաղթահարմանը: Ստորև ներկայացված են նրանց առաջարկություններից մի քանիսը.

- Հանրությանը տեղեկացնել և կրթել իրենց իրավունքների մասին, մարդկանց խրախուսել, որ ավելի հաճախ տարբեր հարցերով դիմեն կառավարման մարմիններին, ավելի գրագետ և ճիշտ գրավոր հարցումներ կազմեն՝ հղում անելով ՏՄ օրենսդրությանը (հարցվածներից 97-ի կարծիքը):
- Պաշտոնյաներին (հատկապես բարձրաստիճան որոշում կայացնողներին) ուսուցանել և տեղեկացնել, թե գործնականում ինչպես պետք է կիրառել ՏՄ օրենսդրությունը, բարձրացնել պաշտոնյաների իրավական գիտելիքի մակարդակը (հարցվածներից 67-ի կարծիքը):
- Հնարավորինս սեղմ ժամկետում պետական մարմիններում ընդունել տեղեկություններ տրամադրելու միասնական համակարգ, բոլոր պետական

մարմիններում ստեղծել մամուլի և հանրության հետ կապերի վարչություններ (հարցվածներից 34-ի կարծիքը):

- Զարգացնել համապատասխան գերատեսչություններում հանրության հետ կապերի և մամուլի վարչությունների/կենտրոնների մարդկային և տեխնիկական ռեսուրսները:
- Լրատվամիջոցներով ակտիվ գովազդել օրենքը:
- Կատարելագործել և ներդաշնակեցնել համապատասխան օրենսդրությունը:
- Քննադատել այն պաշտոնյաներին, ովքեր ոտնահարում են մարդկանց տեղեկություններ ստանալու իրավունքը, և ձևավորել նրանց և նրանց գերատեսչությունների մասին բացասական հանրային կարծիք:
- Միջոցներ ձեռնարկել պաշտոնյաների հոգեբանությունն ու մտածելակերպը փոխելու համար, և քարոզել այն մոտեցումը, որ պետական մարմիններն աշխատում են հանրության համար, և ոչ թե հակառակը:
- Կառավարությունը պետք է սերտորեն համագործակցի ՀԿ սեկտորի հետ և հանրությանը բացատրի, թե որ մարմնից ինչ տեղեկություններ կարելի է ստանալ, որտեղ և ինչպես օգտվել տեղեկություններ ստանալու իրավունքից:
- Ստեղծել ինտերնետից օգտվելու հնարավորություններ և մարդկանց սովորեցնել, թե ինչպես օգտվել ինտերնետից:
- Պետական մարմիններում նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնյաներ:
- Բոլոր գերատեսչություններում ստեղծել «մեկ պատուհանի» սկզբունքով գործող էլեկտրոնային համակարգեր և մշակել գերատեսչությունների ներսում փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառության համակարգեր:
- Ուժեղացնել ոտնահարված ՏՄ իրավունքը վերականգնելու մեխանիզմները: Օրենքի խախտումները պետք է առաջացնեն պատասխանատվություն՝ ինչպես վարչական, այնպես էլ քրեական: Անհրաժեշտ է ակտիվացնել դատական հսկողությունը:
- Ընդունել տեղեկություններ տրամադրելու կարգեր, որոնք պետք է հստակեցնեն, թե ինչպես տեղեկություններ տրամադրել հանրությանը:

ՊԱՇՏՈՆՑԱՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՄԻՆ

37 պաշտոնյա չի կարողացել ներկայացնել բաց/թափանցիկ պետական մարմնի որևէ օրինակ, իսկ 35-ն ասել են, որ դժվարանում են պատասխանել, թե որն է ամենից ոչ-թափանցիկ մարմինը:

Բաց կառույցների շարքին պաշտոնյաները նախ դասել են իրենց գերատեսչությունները, ապա՝ մյուսները: Օրինակ՝ պարզվեց, որ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը որպես բաց կառույց նշած բոլոր երեք պաշտոնյաները ներկայացնում են հենց այդ նախարարությունը: Դա, իհարկե, անկողմնակալ մոտեցում չի կարող համարվել: Առավել հաճախ որպես բաց հաստատություն նշվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ու կրթության և գիտության նախարարությունները (տասական ձայն): Հաջորդում է ՀՀ կառավարության աշխատակազմը (10), սակայն այդ տասից երկուսը հենց այդ մարմնի ներկայացուցիչներ են եղել: Վեց պաշտոնյաներ որպես բաց մարմին նշել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, և 3-ը՝ ՀՀ նախագահի աշխատակազմը: 3 պաշտոնյաներ պատասխանել են, որ Հայաստանում բոլոր

պետական մարմինները բաց են, իսկ 3-ը նշել են, որ Հայաստանում ընդհանրապես բաց կառույցներ չկան:

Ոչ թափանցիկ մարմինների շարքին դասվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը (համար առաջին պատասխանը՝ 22 ձայնով), ոստիկանությունը (12), իրավապահ մարմիններն ընդհանրապես (11), դատախազությունը և դատախազական մարմիններն ընդհանրապես (10), պաշտպանության նախարարությունը (7), հարկային պետական ծառայությունը և մաքսային պետական կոմիտեն (5): Չորս պաշտոնյաներ պնդել են, որ Հայաստանի Հանրապետությունում փակ պետական մարմիններ ընդհանրապես չկան:

SU ՈԼՈՐՏՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաներից 63-ը (կամ 61 տոկոսը) SU հարցերով ուսուցման երբեք չեն մասնակցել, 35-ը (կամ 34 տոկոսը)՝ մասնակցել են, իսկ 2-ն այդ հարցին չեն պատասխանել: 22 պաշտոնյաներ նշել են, որ իրենց աշխատանքային փորձը հարստացնելու համար ուսուցման կարիք չունեն: 58 հոգի (կամ 56 տոկոսը) ասել են, որ ուսուցում անցնելու անհրաժեշտություն են տեսնում, իսկ 24-ը այդ հարցին չեն պատասխանել:

Հարցազրույցներին մասնակցած որոշ պաշտոնյաներ կարծիք են հայտնել իրենց մասնակցությամբ անցած դասընթացների ձևաչափի և արդյունավետության վերաբերյալ: Նրանց կարծիքով, միայն օրենքի դրույթները ներկայացնելու կարիք չկա, որովհետև պաշտոնյաների մեծ մասն արդեն իսկ քաջ ծանոթ է դրանց: Ավելի արդյունավետ կլինեք, եթե ավելի մեծ ուշադրություն դարձվեր օրենքի կիրառման մեխանիզմներին և իրական փորձին: Պաշտոնյաներից մեկը նշել է, որ, ելնելով նախկինում հաճախած դասընթացներից, նրանց մարմինը (Վայոց Ձոր) մշակել է SU հարցումների նմուշներ, որոնք արդեն ակտիվ օգտագործվում են:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչը նկատել է, որ դասընթացները հիմնականում կազմակերպվում են ամերիկյան կամ եվրոպական կազմակերպությունների և փորձագետների կողմից, մինչդեռ նրանց մտածելակերպը կտրուկ տարբերվում է տեղի բնակչության մտածելակերպից: Իր կարծիքով, դա է դասընթացների ցածր արդյունավետության պատճառը:

Հարցվածների խոսքերով, կարևոր է, որ դասընթացները լինեն ոչ թե մեկանգամյա, այլ պարբերական: Ահա մի քանի առաջարկություն ևս.

- Ուսուցումը պետք է պաշտոնյաների մտածելակերպը և աշխատանքային կուլտուրան փոխելու նպատակ հետապնդի,
- Քանի որ տեղեկատվության ոլորտն արագ է զարգանում, ուսուցանողները պարտավոր են հետևել նոր զարգացումներին և ըստ այդմ փոփոխել ուսուցման մեթոդաբանությունը,
- Դասընթացները պետք է խրախուսեն աշխատանքային պարտականությունների ճիշտ կատարումը,
- Օգտակար է ուսումնասիրել այլ երկրների փորձը, հատկապես լավագույն պրակտիկան,
- Ուսուցման ընթացքում մասնակիցները պետք է տեղեկացվեն SU միջազգային չափանիշների մասին:

Պաշտոնյաներից մեկը պնդել է, որ ցանկացած ուսուցում անիմաստ է: Մեկ այլ պաշտոնյա այդ բացասական կարծիքը բացատրել է նրանով, որ երբեմն պաշտոնյային վերադասն է կարգադրում չտրամադրել տեղեկություններ: Նման դեպքերում ոչ մի ուսուցում կամ սեմինար չի կարող հարցը լուծել: Դա նշանակում է, որ ուսուցման բոլոր ծրագրերը պետք է նախ և առաջ ուղղված լինեն բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք հիմնական որոշումներ կայացնողներն են:

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Հայաստանում պաշտոնական տեղեկությունների մատչելիությունը մնում է խնդրահարույց բնագավառներից մեկը: Թեև պետական պաշտոնյաներն ընդունում են, որ պարտավոր են տեղեկություններ տրամադրել, սակայն փորձը ցույց է տալիս, որ պաշտոնական տեղեկությունների մատչելիության մակարդակը դեռևս անբավարար է:

Հարցազրույցներին մասնակցած պաշտոնյաների կարծիքով, հիմնական խոչընդոտները հետևյալն են.

- Տեղեկությունների դասակարգման, պահպանման և տրամադրման միասնական մեխանիզմների և կարգերի բացակայություն,
- Չափից դուրս բյուրոկրատական մոտեցումներ և հին մտածողություն պաշտոնյաների շրջանում,
- Լրագրողների և քաղաքացիների շրջանում իրենց օրինական իրավունքների մասին գիտելիքի պակաս,
- Պետական մարմիններում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձանց և տեղեկատվական վարչությունների բացակայություն,
- Պետական մարմիններում հանրության հետ կապերի և տեղեկատվության ազատության միասնական քաղաքականության բացակայություն,
- Մամուլի և հանրության հետ կապերի վարչությունների կառուցվածքի միասնական համակարգի բացակայություն: Որոշ դեպքերում գործում է հանրության հետ կապերի առանձին վարչություն: Մյուս դեպքերում տեղեկատվության ազատության համար պատասխանատու է մամլո քարտուղարը կամ աշխատակազմի ղեկավարը, և այլն,
- ՏՄ և հանրության հետ կապերի գործառույթները սահմանված չեն պետական մարմինների կանոնադրություններում,
- Քաղաքացիական ծառայողների համար նախատեսված այսօրվա ուսուցման համակարգը չի ներառում ՏՄ գիտելիքն ու հմտությունները:

Տեղեկություններ տրամադրելու արդյունավետությունը նաև կախված է առանձին աշխատակիցների անձնական պարտաճանաչությունից և ՏՄ-ի վերաբերյալ նրանց գիտելիքից ու փորձից: Փորձը ցույց է տալիս, որ այն դեպքերում, երբ տեղեկատվության պատասխանատուները արհեստավարժ ձևով են աշխատում, հարցումներին ընթացք է տրվում պատշաճ և արագ: Ցավոք, մեր դիտարկումները ցույց են տվել, որ տեղեկատվության պատասխանատուներն իրենց փորձը և գիտելիքները ձեռք են բերել հիմնականում երկարատև աշխատանքային փորձի, և ոչ որևէ հատուկ ուսուցման շնորհիվ: Տեղեկատվության ազատության մասին նրանց գիտելիքը խիստ սահմանափակ է և ավելի շատ հիմնված է ավանդույթների և վերադասի ցուցումների վրա:

Կարգերի և մեխանիզմների կամ ենթաօրենսդրական ակտերի բացակայությունը շատ հարցեր թողնում է պաշտոնյաների հայեցողությանը, ինչը հարցումների կամայական մերժումների, տեղեկությունների աղավաղման և,

ծայրահեղ դեպքերում, նույնիսկ կեղծ տեղեկությունների տրամադրման պատճառ է դառնում:

Ընդհանուր առմամբ ընդունվում է, որ տեղեկություններ ստանալու իրավունքը պատկանում է բոլորին, սակայն փորձը ցույց է տալիս, որ լրագրողներն ավելի հեշտությամբ են տեղեկություններ ստանում, քան շարքային քաղաքացիները:

Էլեկտրոնային կառավարման համակարգը թերզարգացած է: Պաշտոնական վեբ-կայքերը կամ ընդհանրապես բացակայում են, կամ էլ թերի են պահպանվում, այսինքն՝ պարբերաբար չեն թարմացվում և/կամ անբավարար ծավալի հիմնական տեղեկություններ են պարունակում:

Պետական մարմիններում իշխում են գաղտնիության խորհրդային ավանդույթները, ինչը կարող է վտանգել հասարակության մեջ ի հայտ եկող ժողովրդավարական արժեքները:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ոստիկանությունը, ինչպես նաև դատախազությունը և պաշտպանության նախարարությունը, ակներևաբար, հանրության առջև բաց լինելու առումով վերջին տեղերն են զբաղեցնում: Առավել դժվար է ձեռք բերել ռազմական և անվտանգության խնդիրներին վերաբերող տեղեկություններ:

Պաշտոնյաների ճնշող մեծամասնությունը զգում է ՏՄ հարցերին նվիրված դասընթացներին պարբերաբար մասնակցելու կարիք: Նրանց կարծիքով, դասընթացները պետք է պարբերաբար անցկացվեն: Դրանց ընթացքում պետք է ուսումնասիրվեն ՏՄ բնագավառում նոր միտումները, այդ թվում՝ էլեկտրոնային ՏՄ կառավարման մեթոդներն ու մեխանիզմները: Դասընթացների ժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել ինչպես ՀՀ, այնպես էլ միջազգային իրավական նորմերը և կուտակված միջազգային լավագույն փորձը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Պետական պաշտոնյաների ուսուցում:** Առաջարկվում է ՏԱ հարցերին նվիրված դասընթացներ կազմակերպել պետական բոլոր մարմիններում աշխատող մամուլի և հասարակայնության հետ կապերի պատասխանատուների համար: Դասընթացները պետք է առնչվեն ինչպես տեղեկատվության մատչելիության իրավական հարցերին, այնպես էլ տեղեկատվության կառավարման տեխնիկական/գործնական հմտություններին: Դասընթացները պետք է ներառեն նաև ՏԱ բնագավառում միջազգային փորձը և տեղեկատվության ազատությանը վերբերող միջազգային փաստաթղթերը: Դասընթացներն անցկացնելու համար միանգամայն հնարավոր է օգտագործել տեղական մարդկային ռեսուրսները՝ միջազգային փորձագետների աջակցությամբ: Դասընթացներին իրենց լուծման կարող են ներդնել ՏԱ հարցերով փորձագետները տարբեր ՀԿ-ներից:
- **Շարունակական ուսուցում:** Առաջարկվում է ՏԱ հարցերին նվիրված դասընթացներն ընդգրկել Կառավարման պետական ակադեմիայի ուսումնական ծրագրերում և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որակավորման ծրագրերում: Առաջարկվում է նաև ՏԱ բնագավառի տեղական և միջազգային օրենսդրության մասին դասընթացներ ընդգրկել համալսարանների ուսումնական ծրագրերում, հատկապես ժուռնալիստիկայի և իրավաբանական ֆակուլտետներում: Որոշ հիմնական գիտելիքներ պետք է հաղորդվեն նաև դպրոցներում:
- **Ներքին ուղեցույցներ:** Առաջարկվում է, որ պետական ծառայողների և իրավապահ մարմինների ներկայացուցիչների համար քաղաքացիական հասարակության (մասնավորապես՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի) կողմից արդեն իսկ հրապարակված ձեռնարկներն ու ուղեցույցներն օգտագործվեն շարունակական ուսուցման համար, որի ընթացքում վարչական աշխատողները պետք է սովորեն՝ ինչպես կիրառել ՏԱ օրենսդրությունը:
- **Փորձի փոխանակում:** Առաջարկվում է մշակվել ՏԱ փորձի փոխանակման մեխանիզմներ ՀՀ իշխանության տարբերի ճյուղերի և մարմինների միջև, ինչպես նաև ՀՀ և այլ երկրների քաղաքացիական ծառայողների միջև, որոնք ՏԱ օրենսդրության կիրառման առավել հարուստ փորձ ունեն:
- **Ուսուցում իրավապահ մարմինների համար:** Բացի ՏԱ հարցերին նվիրված ընդհանուր դասընթացներից, անհրաժեշտ են նաև հատուկ դասընթացներ իրավապահ մարմինների համար, որոնց ժամանակ պետք է ուսումնասիրվի, թե ինչպես ապահովել լրատվամիջոցների՝ տեղեկատվության անարգել մատչելիությունը ցույցերի ժամանակ: Այս առաջարկությունն արվել է նաև Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ-ի ներկայացուցչի «Քաղաքական ցույցերի ժամանակ լրատվամիջոցների հետ աշխատանքը» հատուկ զեկույցի մեջ, որը լույս է տեսել 2007 թ.-ի հունիսի 21-ին: Զեկույցի մեջ նշված է, որ «լրատվամիջոցների դերը, գործունեությունը, իրավունքներն ու պարտականությունները պետք է ընդգրկվեն այն դասընթացներում, որոնք կազմակերպվում են իրավապահ մարմինների համար, քանի որ նրանց

պարտականությունները ներառում են ցույցերի ժամանակ ամբոխի կառավարումը»: Իրավապահները պետք է «պատշաճ ձևով տեղեկացվեն լրագրողների դերի և գործառույթների մասին, և հատկապես ցույցերի ժամանակ նրանց դերի մասին: Ոստիկանության կողմից չափազանց սուր արձագանքի դեպքում, լրագրողների նկատմամբ ոստիկանության գործողությունների խնդիրը պետք է ուսումնասիրվի առանձին, անկախ նրանից, թե ցույցն արտոնված է եղել, թե ոչ»:

Բացի վերը նշվածից, հետևյալ առաջարկությունները կօգնեն SU օրենսդրության կիրառման պրակտիկան կատարելագործելու հարցում՝

- **Հանրության իրազեկման մակարդակի բարձրացում:** Առաջարկվում է, որ ն՛կառավարությունը, և թե՛ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները քայլեր ձեռնարկեն հանրությանը տեղեկություններ ստանալու իրավունքի և այդ իրավունքից օգտվելու մեխանիզմների մասին տեղեկացնելու ուղղությամբ: Այդ նպատակին կարող է ծառայել քաղաքացիների համար SU հարցերով ուղեցույցների հրատարակումը և տարածումը պետական բոլոր մարմիններում: Տեղեկատվության ազատության գաղափարը պետք է լայնորեն գովազդվի, իսկ դրա կիրառումը պետք է պարզաբանվի:
- **Ներքին համակարգեր:** Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նախարարությունների և մարզպետարանների մեծ մասում տեղեկություն ստանալու հարցումներին ընթացք տալու միասնական համակարգ չի գործում: Մինևույն մարմնի տարբեր վարչություններ ունեն իրենց սեփական ընթացակարգերը: Անհրաժեշտ է խրախուսել, որ բոլոր պետական մարմիններն ունենան տեղեկատվության կառավարման միասնական կարգեր: Կարևոր է նաև, որ քաղաքացիների դիմումներն ու տեղեկություն ստանալու հարցումները գրանցվեն և դրանց ընթացք տրվի առանձին, SU օրենքով նախատեսված ժամկետներում, որոնք տարբերվում են սովորական դիմումների համար նախատեսված ժամկետներից: Պետական մարմինների ընդհանուր բաժիններում անհրաժեշտ է ունենալ հարցման ձևեր, որոնք քաղաքացիներին կօգնեն հարցումները ճիշտ կազմել:
- **Տեղեկատվական ռեգիստրներ:** Յուրաքանչյուր պետական մարմին պետք է հրապարակի տեղեկատվության ռեգիստր, որում մանրամասն նշված է, թե ինչպես պետք է քաղաքացին գրավոր հարցում պատրաստի, տվյալ մարմինն ինչ տեղեկատվություն է տնօրինում, որն է հարցումներին պատասխանելու ներքին կարգը, որոնք են տեղեկությունների տրամադրումը մերժելու հիմքերը, բողոքարկման ինչ մեխանիզմ է գործում և այլն:
- **Տեխնիկական կարողություններ:** Հզորացնել պետական բոլոր մարմինների տեխնիկական կարողությունները, և տեղեկատվության պատասխանատուներին և հանրության հետ կապերի վարչություններին ապահովել նրանց աշխատանքը կատարելու համար բավարար համակարգչային ռեսուրսներով:

- **Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատուներ:** Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատուների նշանակման գործընթացը չափազանց դանդաղ է ընթանում, հատկապես մարզերում: Թեև կենտրոնական կառավարության գրեթե բոլոր մարմիններում նշանակվել են հանրության հետ կապերի պատասխանատուներ, նրանց պարտականությունները նույնը չեն, ինչ տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատուներինը, և մեկը մյուսին չի փոխարինում: ՏՄ օրենքը պահանջում է, որ յուրաքանչյուր պետական մարմին նշանակի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ (ՏՄ օրենք, Հոդված 13): Պետական մարմիններին կոչ է արվում հետևել ՏՄ օրենքի պահանջներին, այդ թվում՝ արագացնելով տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատուների նշանակման գործընթացը:
- **Տեղեկությունների հրապարակում:** Պետական մարմինները չեն կատարում օրենքի պահանջը՝ տարին առնվազն մեկ անգամ հրապարակել իրենց տնօրինման տակ գտնվող որոշակի տեղեկությունները՝ հանրության համար մատչելի վայրում փակցնելու միջոցով: Նույնիսկ վեբ-կայքեր ունեցող մարմինները օրենքի այդ պահանջը չեն կատարում:
- **Ինտերնետի օգտագործում:** Պետական մարմիններում պահվող տեղեկություններին ծանոթանալու կարգը հեշտացնելու նպատակով բոլոր մարմիններին խորհուրդ է տրվում տեղեկություններ տեղադրել իրենց վեբ-կայքերում: Վեբ-կայքեր չունեցող մարմիններին խորհուրդ է տրվում դրանք ստեղծել և իրենց տեղեկությունները մատչելի դարձնել օնլայն ռեժիմում: Անհրաժեշտ է ռեսուրսներ հատկացնել այդ նպատակով: Պետական մարմինների վեբ-կայքերը պետք է պարբերաբար թարմացվեն և պարունակեն հանրությանն ուղղված տեղեկություններ, մասնավորապես՝ ՏՄ օրենքի Հոդված 7-ով նախատեսված տեղեկությունները: Հանրության հետ կապերի և մամուլի վարչությունները պետք է հատուկ աշխատակից ունենան, որը պետք է զբաղվի վեբ-կայքերի թարմացմամբ: Պաշտոնական վեբ-կայքերը պետք է հանրության համար տեղեկատվության կարևոր աղբյուր դառնան: Պաշտոնական վեբ-կայքերում նշված էլեկտրոնային հասցեներով ուղարկված նամակները պետք է ամեն օր ընթերցվեն, և բոլոր էլեկտրոնային հարցումներին պետք է պատշաճ և ժամանակին ընթացք տրվեն: Մինևույն ժամանակ, տեղեկությունն ինտերնետում հրապարակելը չպետք է բացառի գրավոր կամ բանավոր հարցումներին գրավոր կամ բանավոր պատասխան ստանալու հնարավորությունը:
- **Էլեկտրոնային ՏՄ մեխանիզմների հզորացում:** Յուրաքանչյուր մարմին պետք է ստեղծի «մեկ պատուհանի» սկզբունքով գործող էլեկտրոնային համակարգ և մշակի տվյալ մարմնի ներսում փաստաթղթերի էլեկտրոնային շրջանառության համակարգ: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է արագացնեն իրենց գործունեության մատչելիությունն ու հրապարակայնությունն ապահովող էլեկտրոնային մեխանիզմներ ստեղծելու գործընթացը, որ նախատեսված են ՏՄ օրենքով: Կենտրոնական և մարզային կառավարման յուրաքանչյուր մարմին պետք է ունենա փաստաթղթերի կառավարման համակարգ: Նախընտրելի է էլեկտրոնային համակարգը, սակայն

դրա բացակայության դեպքում թղթային փաստաթղթերի հաշվառման համակարգերը նույնպես ընդունելի են:

➤ **Ենթաօրենսդրական կարգերի ընդունում:** Կառավարությունը պետք է մշակի և ընդունի փաստաթղթերի հավաքման, գրանցման և պահպանման կարգերը սահմանող ենթաօրենսդրական ակտերը: Մասնավորապես, անհրաժեշտ է մշակել և ընդունել հետևյալ կարգերը.

- Տեղեկություններ տրամադրելու համար վճարման կարգը,
- Փաստաթղթերի հավաքման և գրանցման կարգը,
- Տեղեկությունների դասակարգման և պահպանման կարգը: Օրենքով տեղեկատվություն տնօրինողներն այս կարգի հիման վրա պետք է մշակեն տեղեկություններ տրամադրելու, դասակարգելու և գրանցելու իրենց սեփական ընթացակարգերը:

➤ **Բողոքարկման անկախ համակարգ:** ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն ավելի ակտիվ պետք է քննի տեղեկություններ ստանալու իրավունքի խախտումները և համապատասխան միջոցներ ձեռնարկի այդ իրավունքը պաշտպանելու համար: Պաշտոնատար անձինք պետք է պատասխանատվություն կրեն իրենց ապօրինի գործողությունների համար: Խիստ նպատակահարմար է, որ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում տեղեկատվության ազատության հետ կապված դիմումներով զբաղվի առանձին աշխատակից կամ աշխատակիցների խումբ:

Ամփոփելով ՀՀ պետական մարմինների կողմից տեղեկատվության ազատության կիրառման պրակտիկան, պետք է նշել, որ տեղեկատվության ազատությունը կախարդական փայտիկ չէ, որը մեկ օրում կարող է բարելավել կառավարման ողջ համակարգը: Այն գործընթացի մի մաս է, որը պետք է փոխի կառավարման և պետական ծառայության մշակույթը և, ժամանակի ընթացքում բարելավի որոշումներ կայացնելու գործընթացի որակը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

	<i>ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ</i>
1.	ՀՀ Նախագահի աշխատակազմ
2.	ՀՀ կառավարության աշխատակազմ
3.	ՀՀ առողջապահության նախարարություն
4.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն
5.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
6.	ՀՀ արդարադատության նախարարություն
7.	ՀՀ բնապահպանության նախարարություն
8.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
9.	ՀՀ էներգետիկայի նախարարություն
10.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
11.	ՀՀ մշակույթի նախարարություն
12.	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
13.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
14.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
15.	ՀՀ քաղաքաշինության նախարարություն
16.	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
17.	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
18.	ՀՀ ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
19.	ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայություն
20.	ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե
21.	ՀՀ քաղաքային ավիացիայի գլխավոր վարչություն
22.	ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության
23.	ՀՀ ՏԿՆ Հայաստանի փրկարար ծառայություն
24.	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ
25.	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
26.	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
27.	ՀՀ արժեթղթերի հանձնաժողով
28.	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
29.	Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով
30.	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
31.	Երևանի քաղաքապետարան
32.	Արագածոտնի մարզպետարան
33.	Արարատի մարզպետարան
34.	Արմավիրի մարզպետարան

35	Գեղարքունիքի մարզպետարան
36	Լոռու մարզպետարան
37	Կոտայքի մարզպետարան
38	Շիրակի մարզպետարան
39	Սյունիքի մարզպետարան
40	Վայոց Ձորի մարզպետարան
41	Տավուշի մարզպետարան
42	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
43	ՀՀ ոստիկանություն
44	ՀՀ պաշտպանության նախարարություն
45	ՀՀ գլխավոր դատախազություն